ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ • ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ



ROUND SQUARE

COLEGIO DEL MUNDO • WORLD SCHOOL • ÉCOLE DU MONDE

CIS MEMBER

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՀԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԲԸ
ՏՆՕՐԵՆ _____ ԱՐԱՄ ԱԼԻԽԱՆՅԱՆ
29 նոյեմբերի 2024թ.

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՀԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԵՐԵԽԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3
2. Օգտագործվող հասկացություններ 5
3. Համապատասխանություն օրենքներին և կանոնակարգերին 6
4. Անվտանգ միջավայրի ապահովում 6
5. Քաղաքականության կիրառման շրջանակ 7
6. Խախտումների մասին հաղորդում, առաջնային աջակցության ցուցաբերում 10
7. Էթիկական սկզբունքներ 12
8. Երեխայի հետ շփման էթիկական նորմեր 12
9. Բռնությունն ու դրա տեսակները 14
10. Օգտագործված գրականություն 18

1. Ներածություն

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի (այսուհետ՝ նաև Շիրակացու ճեմարան կամ ճեմարան) գործունեության կարևոր սկզբունքներից է երեխաների անվտանգության, բարեկեցության ապահովումը, բոլոր տեսակի վտանգներից և չարաշահումներից պաշտպանելը: Ճեմարանը համոզված է, որ յուրաքանչյուր երեխա իրավունք ունի մեծանալու ապահով և հոգատար միջավայրում՝ զերծ ցանկացած տեսակի շահագործումից, անտեսումից կամ բռնությունից: Ճեմարանական համայնքի յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ երեխաները խոցելի անհատներ են, որոնք արժանի են հատուկ խնամքի և պաշտպանության, և պարտավորվում է պաշտպանելու նրանց իրավունքներն ու լավագույն շահերը բոլոր գործողություններում և փոխհարաբերություններում:

Ճեմարանը տեղյակ է երեխաների հանդեպ բռնության և անտեսման լուրջ հետևանքների մասին և գիտակցում է երեխաների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացման կարևորությունը:

Ճեմարանը կարևորում է սովորողների և աշխատողների համար անվտանգ միջավայրի ապահովումը: Ճեմարանի տարածքում անվտանգությունն ապահովվում է համաձայն «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ Առողջապահության նախարարի 28.03.2017 թվականի N 12-Ն հրամանի, «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին ՀՀ Առողջապահության նախարարի 06.06.2014 թվականի N 32-Ն հրամանի պահանջներին, ինչպես նաև սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային նորմերի պահպանման վերաբերյալ այլ համապատասխան իրավական կարգավորումներին:

2. Երեխաների պաշտպանության քաղաքականության նպատակներն են՝

2.1. երեխաների անվտանգության և բարեկեցության ապահովում,

2.2. Երեխաների պաշտպանություն բռնությունից, անփութությունից, շահագործումից և բռնարարքներից:

2.3. Երեխաների իրավունքների պաշտպանությունը համաձայն ներպետական օրենսդրության, միջազգային իրավական ակտերի, այդ թվում՝ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիայի՝ ապահովելով նրանց արժանապատվության, հարգանքի և արդարության նկատմամբ վերաբերմունքը:

2.4. Ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ երեխաները կզգան իրենց անվտանգ, պաշտպանված և կկարողանան ազատ արտահայտել իրենց մտահոգությունները:

2.5. Հստակ սահմանել Ճեմարանի աշխատողների և մյուս շահագրգիռ կողմերի դերերը երեխաների պաշտպանության գործում:

2.6. Ապահովել, որ երեխաների նկատմամբ բռնության դեպքերը և մտահոգությունները բացահայտվեն և դրանց պատասխան տրվի արագ, արդյունավետ և օրենքին համապատասխան:

2.7. Վնասի կանխում՝ իրազեկվածության բարձրացման միջոցով

2.8. Կազմակերպել ուսուցում և իրազեկման ծրագրեր՝ ինչպես Ճեմարանի աշխատողների և ծնողների, այնպես էլ երեխաների համար՝ երեխաների պաշտպանությունը ճանաչելու և դրա վերաբերյալ գործելու համար:

2.9. Իրավական և բարոյական նորմերին համապատասխանություն

2.10. Վստահության ձևավորում ընտանիքների և համայնքների հետ՝ երեխաների անվտանգությունն ու պաշտպանությունը կարևորելու վերաբերյալ:

3. Օգտագործվող հասկացություններ

Սույն քաղաքականության մեջ օգտագործվող հասկացությունները և դրանց նշանակությունը

3.1. ***Քաղաքականություն՝*** սույն Երեխաների պաշտպանության քաղաքականությունը

3.2. ***Ճեմարան՝*** «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր» ՓԲԸ

3.3. ***Ճեմարանի աշխատող՝*** Ճեմարանի հետ աշխատանքային և/կամ քաղաքացիաիրավական իրավահարաբերություններում գտնվող բոլոր անձինք, այդ թվում նաև՝ պրակտիկանտներ, կամավորներ,

3.4. ***Ճեմարանի տարածք՝*** «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր» ՓԲԸ տարածքը՝ մասնավորապես ՀՀ ք. Երևան, Արտեմ Միկոյան 35, ՀՀ ք. Երևան Գալշոյան 15, ՀՀ, մարզ Կոտայք, Մեղրաձոր գյուղ Գոռ-Գոչ, 3-րդ փ, թիվ 2 ճամբար հասցեները, ինչպես նաև Տարածքների արտաքին մուտքից /դարպասից/ հինգ մետր հեռավորությունը, Սաների տեղափոխման նպատակով Ճեմարանի կողմից վարձակալված տրանսպորտային միջոցները:

3.5. ***Ճեմարանական համայնք՝*** Ճեմարանի սաները, մանկավարժները, Սաների ծնողները և Ճեմարանի այլ աշխատակիցները:

3.6. ***Սան*** - Կրթական ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա Ճեմարանում հաշվառված սովորող:

4. Համապատասխանություն օրենքներին և կանոնակարգերին

Սույն Քաղաքականությունը կազմվել է հետևյալ օրենքների հիման վրա.

4.1. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 29.05.1996թ.

4.2. Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կոնվենցիա 20.11.1989թ

4.3. ՀՀ Սահմանադրություն, 22.12.2015թ.

4.4. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 18.05.2015թ:

4.5. Շիրակացու ճեմարանի Սաների Վարքականոն՝ վերանայված և լրամշակված 22.11.2023 թվականին,

4.6. «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր» ՓԲԸ-ի ներքին կարգապահական կանոններ՝ ընդունված 10.01.2025 թվականին:

4.7. «Աշխատակիցների անձնական տվյալների հավաստիության ստուգման կարգ»

5. Անվտանգ միջավայրի ապահովում

5.1. **Ճեմարանը պարտավորվում է՝**

5.1.1. ապահովել անվտանգ միջավայր, որտեղ երեխաները պաշտպանված կլինեն բռնությունից և անտեսումից,

5.1.2. Ճեմարանի բոլոր աշխատողներին տեղեկացնել երեխաների հանդեպ կիրառվող բռնության և անտեսման ռիսկերի, ազդեցության և բռնության ենթարկման հայտանիշերի մասին,

5.1.3. Ճեմարանի բոլոր աշխատողներին տեղեկացնել իրենց դերի և պատասխանատվության մասին,

5.1.4. ապահովել երեխաների անձնական տվյալներին և բռնության դեպքերին առնչվող տեղեկատվության գաղտնիությունը,

5.1.5. ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ՝ երեխաների նկատմամբ բռնության ռիսկերը կանխելու և մեղմելու համար,

5.1.6. ստեղծել երեխաների պաշտպանության քաղաքականության իրականացման գործընթացի թափանցիկության, հաշվետվողականության և հետևողական արձագանքի մշակույթ,

5.1.7. տրամադրել համապատասխան աջակցություն և ռեսուրսներ բռնության ենթարկված երեխաներին,

5.1.8. կիրառել երեխաների պաշտպանությանը վերաբերող բոլոր գործող օրենքները, կանոնակարգերն ու միջազգային չափանիշները,

5.1.9. շարունակաբար վերանայել և բարելավել սույն Քաղաքականությունը՝ երեխաների պաշտպանության ամենաբարձր չափանիշներն ապահովելու համար:

5.1.10. ստեղծել վստահելի, ապահով միջավայր, որի շնորհիվ Սաները, ծնողներն ու աշխատողները, անկախ իրենց դերից, կարող են ազատորեն խոսել իրենց խնդիրների մասին, լինել լսված,

5.1.11. տրամադրել համապատասխան անձանց և ծառայության կոնտակտային տվյալներ, որոնց Սաները և ծնողները կարող են դիմել անհանգստության, հարցերի կամ խնդիրների դեպքում,

5.1.12. հրապարակել երեխայի անձնական տվյալներ պարունակող տեղեկությունները (այդ թվում նաև նկար, տեսանյութ Սանի մասնակցությամբ) միայն ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի թույլտվությամբ,

5.1.13. բացառել քաղաքական, կրոնական և ցանկացած այլ տեսակի քարոզչություն,

5.1.14. բացառել խտրական վերաբերմունքը,

6. Քաղաքականության կիրառման շրջանակ

6.1 Սույն Քաղաքականությունը վերաբերում է երեխաների ներգրավվածությամբ բոլոր գործողություններին և փոխազդեցություններին, որոնք իրականացվում են Ճեմարանի նախաձեռնությամբ, ներառյալ՝

6.1.1. Ճեմարանի կողմից տրամադրվող ծրագրեր և ծառայություններ,

6.1.2. Միջոցառումներ, որոնք կազմակերպվել կամ հովանավորվել են Ճեմարանի կողմից,

6.1.3. Փոխազդեցություններ ֆիզիկական տարածքներում, որոնք պատկանում կամ շահագործվում են Ճեմարանի կողմից /էքսկուրսիաներ, սպորտդահլիճներ, լողավազաններ և այլն/,

6.1.4. Առցանց հարթակներ, ներառյալ կայքերը, սոցիալական մեդիայի ալիքները և հաղորդակցման ուղիները, որոնք օգտագործվում են Ճեմարանի կողմից՝ երեխաների հետ շփվելու համար:

6.1.5. Սույն Քաղաքականության մեջ շարադրված սկզբունքներն ու մոտեցումները պարտադիր են վերը նշված բոլոր անձանց համար և կիրառելի են՝ անկախ այն վայրից կամ համատեքստից, որտեղ տեղի է ունենում երեխաների հետ փոխգործակցությունը:

6.2. Քաղաքականության կիրառման պատասխանատուներ

6.2.1. Քաղաքականությունը վերաբերում է Ճեմարանի հետ փոխկապակցված բոլոր անձանց ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալ ցանկով՝ աշխատողներ խորհրդատուներ, պրակտիկանտներ, կապալառուներ և այլն:

6.2.2. Քաղաքականությունն իրականացնելու պատասխանատուն անվտանգության և երեխաների պաշտպանության թիմն է՝ ստորև ներկայացված կազմով՝

6.2.2.1. Երեխայի պաշտպանության լիազորված ներկայացուցիչներ / (Child Protection Officer)

6.2.2.2. Ճեմարանի գլխավոր տնօրեն

6.2.2.3. Կրտսեր դպրոցի (ԿԴ) տնօրեն

6.2.2.4. Միջին դպրոցի (ՄԴ) տնօրեն

6.2.2.5. Ավագ դպրոցի (ԱԴ) տնօրեն

6.2.2.6. Հոգեբանական կենտրոնի ղեկավար

6.2.2.7. Ներառական կրթության համակարգող

6.2.2.8. ՄԴ և ԱԴ կարգապահական աշխատանքների համակարգողներ

6.2.2.9. Ուսումնատեսչական հարցերի համակարգող

6.2.2.10. Ճեմարանի իրավաբան

6.2.2.11. Զինղեկ

6.2.2.12. Բժիշկ

6.2.2.13. Մարդկային ռեսուրսների կառավարման հարցերով փոխտնօրեն

6.2.3. Պատասխանատուների թիմն ապահովում է երեխաների պաշտպանությանն ուղղված հետևյալ միջոցառումների իրականացումը.

6.2.3.1. Ճեմարանի բոլոր աշխատողների իրազեկումը՝ փաստաթղթի քննարկման, սեմինարների վարման և այլ հնարավոր միջոցներով,

6.2.3.2. աշխատողների համար համապատասխան սեմինարներին գրանցումը և մասնակցությունը,

6.2.3.3. տարվա ընթացքում ծագած խնդիրների անանուն վերլուծության կազմակերպումը՝ Քաղաքականության մեջ ըստ անհրաժեշտության փոփոխություններ անելու համար,

6.2.3.4. Քաղաքականության բարելավումը,

6.2.3.5. երեխայի պաշտպանության քաղաքականության իրականացման անմիջական պատասխանատուն՝ երեխայի պաշտպանության լիազորված ներկայացուցիչը / (Child Protection Officer) համապատասխան դպրոցի տնօրենն է, որի պարտականություններն են.

6.2.3.5.1. Քաղաքականության արդյունավետ կիրառումը և իրականացման վերահսկումը,

6.2.3.5.2. Քաղաքականության արդյունավետության պարբերական գնահատումը,

6.2.3.5.3. բոլոր աշխատողների տարեկան իրազեկումը՝ փաստաթղթի քննարկման, սեմինարների վարման և այլ հնարավոր միջոցներով,

6.2.3.5.4. աշխատողների համար համապատասխան սեմինարներին գրանցումը և մասնակցությունը,

6.2.3.5.5. Սաների անվտանգության, տարբեր կենսական ոլորտներում անձնային և սոցիալական հմտությունների զարգացման քննարկման կազմակերպումը,

6.2.3.5.6. Քաղաքականության վերանայումը առնվազն 2 տարին մեկ անգամ,

6.2.3.5.7. դեպքի վերաբերյալ առաջնային հետաքննության իրականացումը,

6.2.3.5.8. հավաքագրված դեպքերի թվային և բովանդակային վերլուծության իրականացումը

6.2.3.5.9. տնօրենության խորհրդին / երեխայի պաշտպանության կոմիտեին պարբերական հաշվետվության ներկայացումը

6.2.3.5.10. անհրաժեշտության դեպքում համապատասխան մարմիններին դիմելը

6.2.3.5.11. Համապարփակ և համակարգված արձագանք ապահովելու համար համապատասպան մարմինների և գերատեսչությունների հետ համագործակցությունը:

6.2.3.5.12. Երեխաների նկատմամբ բռնության կամ անտեսման մասին հաղորդումները արագ և մանրակրկիտ կուսումնասիրվեն վերապատրաստված անձնակազմի՝ համապատասխան դպրոցների տնօրենների կողմից՝ սահմանված արձանագրությունների և ընթացակարգերի համաձայն:

7. Խախտումների մասին հաղորդում, առաջնային աջակցության ցուցաբերում

7.1. Ցանկացած անձ, որը ականատես է լինում կամ կասկածում է երեխայի իրավունքների ոտնահարման որևէ միջադեպի մասին, պարտավոր է՝

7.1.1. երեխային ցուցաբերել առաջին օգնություն (հոգեբանական առաջնային աջակցություն, առաջին բուժօգնություն)՝ մինչ համապատասխան մասնագետի ներկայանալը,

7.1.2. անմիջապես գրավոր/բանավոր և/կամ սահմանված այլ միջոցներով զեկուցել այդ մասին երեխայի պաշտպանության լիազորված ներկայացուցչին /Child Protection Officer/,

7.1.3. սեփական նախաձեռնությամբ երեխայի շահերի պաշտպանության միջոցներ չձեռնարկել,

7.1.4. չքննարկել խնդիրը գործընկերների, ընկերների, ընտանիքի անդամների, այլ անձանց հետ (բացառություն են կազմում խմբի մանկավարժը, ավագ մանկավարժը, ուսանողական առաջնորդը, խմբի հոգեբանը, որոնց հետ դեպքի քննարկումը կատարվում է ըստ անհրաժեշտության),

7.1.5. Ճեմարանական համայնքի ցանկացած անդամ իրավունք ունի հայտնել երեխայի իրավունքների ոտնահարման միջադեպերի մասին՝ մնալով անանուն:

7.2. Երեխաների պաշտպանության լիազորված ներկայացուցիչը պարտավոր է.

7.2.1. ծանոթանալ միջադեպի/բռնության գրավոր և/կամ բանավոր նկարագրությանը,

7.2.2. մանրազնին ուսումնասիրել ներկայացված իրավիճակը,

7.2.3. տեղեկացնել Սանի ընտանիքին բռնության դեպքի վերաբերյալ,

7.2.4. անհրաժեշտության դեպքում հրավիրել տվյալ միջադեպին ներգրավված անձանց (սաներ, ուսուցիչներ, խմբի հոգեբան, մանկավարժ, հարկ եղած դեպքում նաև՝ Սաների ծնող/ներ և այլն),

7.2.5. լիարժեք պատկերը ստանալու նպատակով կատարել փաստերի գնահատում՝ համագործակցային կամ միանձնյա ձևաչափերով,

7.2.6. կատարել աշխատանքային քայլերի մշակում (զրույց, անհատական աշխատանք հոգեբանի հետ, առանձնազրույց ծնողի/ների հետ, ըստ պահանջի՝ հանդիպում Կրթահամալիրի տնօրենի հետ եւ այլն),

7.2.7. կատարել արդյունքների ամփոփում,

7.2.8. ներկայացնել կարգապահական պատասխանատվության և հետագա այլ քայլերի վերաբերյալ առաջարկ:

7.3. Երեխաների պաշտպանության թիմը պարտավոր է.

7.3.1. անհրաժեշտ գործողություններ ձեռնարկել կատարվածը պարզելու ուղղությամբ,

7.3.2. տեղեկացնել բռնության դեպքի վերաբերյալ պետական մարմիններին՝ համապատասխան իրավական ակտերով այդպիսի պարտավորություն ունենալու դեպքում,

7.3.3. ապահովել երեխաների պաշտպանությանն ուղղված գործերում ներգրավված բոլոր անձանց բարեկեցությունն ու անվտանգությունը:

Երեխաների պաշտպանության թիմում համապատասխան լիազորություն ունեցող անձը մինչ հարցի պարզաբանումը պարտավոր է՝

7.3.4. բռնություն իրականացնելու մեջ կասկածվող աշխատողին ժամանակավորապես տեղափոխել այլ բնույթի աշխատանքի (երեխաների հետ շփում չներառող), իսկ սանի դեպքում՝ ժամանակավորապես դադարեցնել նրա հաճախումը Ճեմարան,

7.3.5. բռնության ենթարկված երեխաներին, ինչպես նաև ազդարարներին տրամադրել համապատասխան աջակցության ծառայություններ՝ ներառյալ խորհրդատվությունը, շահերի պաշտպանությունը և ուղղորդում արտաքին ռեսուրսներին,

8. Էթիկական սկզբունքներ

8.1. Երեխաների պաշտպանության հետ կապված զգայուն տեղեկատվության հետ աշխատելիս հստակ պահպանվում է տեղեկատվության գաղտնիությունը:

8.2. Տեղեկատվությունն այլ անձանց և/կամ կառույցների փոխանցվում է՝ ըստ անհրաժեշտության և գաղտնիության, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության մասին գործող օրենքների և քաղաքականությունների համաձայն:

Հավելված 1

9. Երեխայի հետ շփման էթիկական նորմեր

Աշխատողները և նրանց հավասարեցված անձինք Սաների հետ բոլոր տեսակի փոխհարաբերություններում պետք է պահպանեն երեխայի իրավունքների և անհրաժեշտ միջամտության միջև հավասարակշռությունը:

Սույն քաղաքականությունը սահմանում է արդյունավետ հաղորդակցման հետևյալ սկզբունքները՝

9.1. **Ֆիզիկական շփման պարագայում՝**

9.1.1. Երեխաների հետ բոլոր ֆիզիկական շփումները պետք է լինեն տեղին, հարգալից և ոչ սպառնալից,

9.1.2. Ֆիզիկական շփումը պետք է տեղի ունենա միայն անհրաժեշտության դեպքում և միշտ պետք է սկսվի երեխայի նախաձեռնությամբ և/կամ համաձայնությամբ,

9.1.3. անհրաժեշտ է խուսափել ֆիզիկական շփման ցանկացած ձևից, որը կարող է ընկալվել որպես հարկադրող, անպատշաճ կամ պոտենցիալ վնասակար,

9.1.4. չանել երեխայի փոխարեն այն աշխատանքը, որը նա ի վիճակի է ինքնուրույն անելու,

9.1.5. հաշվի առնել գործոնների թույլատրելիությունը. ֆիզիկական կոնտակտը կարող է կիրառվել որպես Սանի մոտ հարմարավետ և հանգիստ վիճակ ստեղծելու կամ նրան օգնություն ցույց տալու միջոց, այն ընդունելի է համարվում Սանի կողմից, արվում է բացահայտ և ոչ գաղտնի, համապատասխանում է տարիքին և զարգացվածության մակարդակին: Այնպիսի ուսումնական գործունեության պարագայում, որտեղ ենթադրվում է ֆիզիկական շփում/ օր. ֆիզկուլտուրա, թենիս, պարարվեստ, լող, ՆԶՊ/, սանը պետք է բարձրաձայն և հստակ զգուշացվի հնարավոր ֆիզիկական շփումների մասին:

9.1.6. Աշխատել բաց միջավայրում, խուսափել մասնավոր կամ չդիտարկվող վայրերում սաների հետ անհատական հանդիպումներից: Բացառություն են կազմում հոգեբանական, լոգոպեդական ծառայությունների կողմից իրականացվող հանդիպումները, ինչպես նաև բժշկական ծառայության կողմից իրականացվող որոշ ստուգումները:

9.2. **Հաղորդակցման պարագայում՝**

9.2.1. երեխաների հետ շփումը պետք է լինի հարգալից, աջակցող և տարիքին համապատասխան,

9.2.2. կարևոր է ակտիվորեն լսել երեխաներին, ցուցաբերել ապրումակցում և լրջորեն վերաբերվել նրանց մտահոգություններին և կարծիքներին,

9.2.3. կարևոր է օգտագործել հարգալից և ոչ սպառնալից լեզու և տոնայնություն՝ խուսափելով ցանկացած տեսակի հարկադրանքից, մանիպուլյացիայից կամ ահաբեկումից,

9.2.4. երեխաների հետ միշտ անհրաժեշտ է պահպանել համապատասխան սահմաններ՝ ինչպես դեմառդեմ, այնպես էլ առցանց շփումների ժամանակ,

9.2.5. անհրաժեշտ է հարգել երեխաների անձնական տարածքը և խուսափել այնպիսի վարքագծերից, որոնք կարող են մեկնաբանվել որպես անձնական սահմանների խախտում կամ չափազանց մտերմիկ:

Անհրաժեշտ է բոլոր Սաներին վերաբերվել հավասարապես հարգալից, սաների հետ հարաբերություններում բացառել «սիրելիներին» առանձնացնելու երևույթը,

9.2.6. պետք է չզբաղվել այնպիսի գործողություններով կամ խոսակցություններով, որոնք դուրս են աշխատակցի դերի կամ պարտականությունների շրջանակներից:

9.3. **Արգելված վարքագիծ է համարվում՝**

9.3.1. ցանկացած տեսակի ֆիզիկական բռնություն, ներառյալ երեխային հարվածելը, ապտակելը, ականջից կամ ձեռքից քաշելը, կսմթելը կամ այլ կերպ ֆիզիկական վնաս պատճառելը,

9.3.2. սեռական ոտնձգություններ իրականացնելը՝ տե՛ս ստորև:

9.3.3. բանավոր վիրավորանքը, ներառյալ երեխայի վրա բղավելը, վիրավորելը կամ այլ կերպ նվաստացնելը,

9.3.4. բուլինգային վարքագիծը, ծաղրելը, երեխայի հանդեպ խտրական վերաբերմունքը:

Հավելված 2

10. Բռնությունն ու դրա տեսակները

Երեխաների հանդեպ բռնությունը նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելն է, այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ երեխայի առողջությանը, կյանքին, զարգացմանը, ինքնությանը իրական կամ պոտենցիալ վտանգ հասցնող ֆիզիկական և/կամ հոգեբանական դաժանությունը, սեռական բնույթի գործողություններ կատարելը կամ երեխային անտեսելն է՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից և չարաշահելով երեխայի վստահությունը:

10.1. **Ֆիզիկական բռնություն**

Երեխայի նկատմամբ ֆիզիկական բռնությունը ֆիզիկական ցավ պատճառելու նպատակով իրականացված ցանկացած գործողություն է: Ավելի նեղ սահմանման համաձայն՝ այն հարվածի, ցնցման, վայր գցելու, թունավորման, այրելու, խեղդելու կամ այլ միջոցով երեխային ֆիզիկական վնաս պատճառելն է: Նշված գործողությունները ֆիզիկական բռնություն են նաև այն դեպքում, երբ դրանց հետևանքները «անտեսանելի» են:

Աղյուսակ 1. Ֆիզիկական բռնության ցուցանիշները

Ֆիզիկական ցուցանիշներ	Հոգեբանական-վարքային ցուցանիշներ
1. Արտաքին վնասվածքներ, կապտուկներ, մատնահետքեր, այրվածքներ, կծածի հետքեր, կոտրվածքներ, որոնք չեն համապատասխանում բերված բացատրությանը և տարիքային առանձնահատկություններին և զարգացմանը: 2. Մի քանի վնասվածքների առկայություն որոշակի ժամանակահատվածի ընթացքում: 3. Վնասվածքների հատվածներ, , որոնց պատահական լինելու հավանականությունը փոքր է, օրինակ՝ գլխի վնասվածքը:	4. Երեխան մշտապես կրում է երկար թևքերով հագուստ, որը կարող է ծածկել վերքերը: 5. Զգտում է թաքցնել վնասվածքի պատճառները: 6. Չի հիշում, թե ինչպես է վնասվածք ստացել կամ տալիս է հակասական բացատրություններ: 7. Վախենում է մեծահասակներից կամ կարող է խուսափել այլ մարդկանցից: 8. Չի ցանկանում տուն գնալ: 9. Ունի սառը, ոչ արտահայտիչ հայացք: 10. Կարող է դրսևորել ագրեսիվ, դյուրագրգիռ վարք: 11. Չափազանց ենթարկվող է, տխուր, լացկան: 12. Դաժան է վերաբերվում կենդանիներին: 13. Խուսափում է ֆիզիկական կոնտակտից (օրինակ՝ շոյելուց խույս տալը): 14. Ունի ինքնավնասման մտքեր և/կամ ինքնավնասման փորձեր: 15. Ունի կախվածությունների հակում: 16. Ունի ցածր ինքնագնահատական: 17. Ցավոտ բուժական միջամտություններին արձագանք չի տալիս: 18. Ունի վախեր: 19. Դժվարանում է արտահայտել հույզերը և այլն:

10.2. **Սեռական բռնություն**

Դեռահասի կամ մեծահասակի կողմից սեռական նպատակով իրականացվող գործողությունը բռնություն է երեխայի նկատմամբ: Սեռական բռնություն է երեխային ֆիզիկական հարաբերության մեջ ներգրավելը,, բռնարարի՝ դրանից ունեցած օգուտը/շահը և ֆիզիկական բավարարվածությունը: Երեխաների նկատմամբ սեռական բռնության ձևերի շարքին դասվում են՝ երեխային սեռական գործողություններ առաջարկելը կամ հարկադրելը (անկախ տարիքից), երեխային սեռական օրգանների, պոռնկագրության ցուցադրումը, երեխայի հետ սեռական հարաբերություններ ունենալը, առանց ֆիզիկական կոնտակտի երեխայի սեռական օրգանների դիտումը, երեխաներին մանկական պոռնկագրության արտադրության համար օգտագործելը, ինչպես նաև 05.05.2021 թվականին ընդունված ՀՀ Քրեական օրենսգրքի գլուխ 27-ում նկարագրված ցանկացած այլ գործողություն:

Աղյուսակ 2. Սեռական բռնության ցուցանիշները

Ֆիզիկական ցուցանիշներ	Հոգեբանական-վարքային ցուցանիշներ
1. Անսովոր քոր սեռական կամ հետանցքի հատվածում: 2. Պատռված, կեղտոտ, բծերով ներքնազգեստ /կարելի է նկատել, երբ երեխան սանհանգույց է գնում/: 3. Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, հղիություն: 4. Ցավ, վերքեր, այտուցներ, արյունահոսություն: 5. Սեռական օրգանների վնասվածք, բորբոքումներ:	1. Երեխան ցուցադրում է տարիքին չհամապատասխանող սեռական խաղեր խաղալիքների, ինքն իր հետ, օր՝սեռական ակտի ցուցադրում: 2. Պատկերում, նկարագրում կամ ցուցադրում է ակնհայտ սեռական բնույթի նկարներ: 3. Ունի անսովոր, տարիքին ոչ համապատասխան գիտելիքներ սեռական կյանքի մասին: 4. Դրսևորում է գայթակղիչ, էրոտիզացված վարք: 5. Վարքում դրսևորվում են սեռական բնույթի հպումներ այլ Սաների նկատմամբ: 6. Ունի անկանոն սեռական կապեր /դեռահասության տարիքում/: 7. Ունի դեպրեսիա, ցածր ինքնագնահատական: 8. Ունի գիշերային մղձավանջեր,վախեր: 9. Զգտում է ամբողջությանբ փակել սեփական մարմինը: 10. Զգում է տհաճություն, զզվանք ցանկացած հպումների նկատմամբ:

	11. Միտված է անտեսելու այլ մարդկանց մարմնի սահմանները / կարող են անծանոթ մարդկանց մարմնի, այդ թվում ինտիմ մասերին կպնել/: 12. Ունի ուշադրության կենտրոնացման դժվարություններ: 13. Ունի առաջադիմության անկում: 14. Ցուցադրում է կեղծ՝ մեծահասակին բնորոշ վարք: 15. Կարող է ոգելից խմիչք, թմրանյութեր օգտագործել 16. Ունի հասակակիցների հետ շփման դժվարություններ:

10.3. **Բարձիթողություն կամ անտեսում**

Բարձիթողությունը կամ անտեսումը երեխայի ծնողի կամ խնամակալի կողմից երեխայի ֆիզիկական և հոգեբանական կարիքները բավարարելու շարունակական և տևական անտեսումն է, այդ թվում գործողության կատարման կամ անգործության եղանակով, ինչը լրջորեն վնասում է երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջությանն ու զարգացմանը: Բարձիթողությունը կարող է ունենալ հետևյալ դրսևորումները՝ լքումը, տանից վտարումը, երեխային շարունակաբար այլոց խնամքին թողնելը, սնունդ չտալը, անհրաժեշտ հագուստով չապահովելը, երեխայի հիգիենային չհետևելը, բժշկական խնամքից հրաժարվելը կամ այն հետաձգելը, ոչ ընդունելի վարքը խրախուսելը, կրթական և/կամ հատուկ կարիքներն անտեսելը և այլն:

Աղյուսակ 3. Բարձիթողության կամ անտեսման ցուցանիշները

Ֆիզիկական ցուցանիշներ	Հոգեբանական-վարքային ցուցանիշներ
1. Խոսքային, շարժողական զարգացման հապաղումներ 2. Հաճախակի դժբախտ պատահարներ 3. Հաճախակի այցելություններ բժշկին 4. Հաճախակի շտապօգնության կարիք (հոսպիտալիզացիա /հիվանդանոց)	1. Ունի հուզական կապվածության խնդիրներ 2. Դրսևորում է տագնապալի վարք, խուսափում 3. Ունի դեպրեսիվ տրամադրություն, ապաթիա 4. Բնորոշ է ագրեսիվությունը և իմպուլսիվությունը 5. Փնտրում է ոչ խտրական, անկանոն ֆիզիկական կոնտակտ օտարների հետ 6. Բնորոշ է սոցիալ-հուզական հասունության պակաս:

5. Հիգիենայի անբավարար պայմաններ 6. Հոգնած, քնկոտ տեսք 7. Կարճ հասակ, նվազ քաշ 8. Առողջական անկայուն վիճակ 9. Փնթի արտաքին տեսք 10. Չափից շատ հյուծվածություն կամ գիրություն	7. Զգտում է ցանկացած ձևով գրավել մեծահասակների ուշադրությունը 8. Ունի կոնֆլիկտային կամ սահմանափակ փոքր թվով կապեր/հարաբերություններ, 9. Հաճախ է բացակայում դպրոցից 10. Ունի ուսուցման դժվարություններ 11. Ունի կենտրոնացման դժվարություն: 12. Ունի ցածր ինքնագնահատական 13. Դրսևորում է ինքնավնասող վարքագիծ 14. Դրսևորում է հակահասարակական վարքագիծ:

10.4. **Հոգեբանական բռնություն**

Հոգեբանական բռնությունը երեխայի նկատմամբ թշնամական կամ անտարբեր վերաբերմունքն է: Հոգեբանական բռնությունը ներառում է երեխայի ազատ տեղաշարժի սահմանափակումը, ծաղրելը, սպառնալը, ահաբեկելը, մանիպուլյատիվ միջոցներով կախյալության մեջ պահելը, խտրական վերաբերմունք ցուցաբերելը, մերժումը, թշնամանքը, ինչպես նաև բռնությանը ականատես դարձնելը: Վերջինս կարող է ներառել երեխային ստիպելը դիտել բռնության տեսարաններ կամ դրան պատահաբար ականատես լինելը:

Աղյուսակ 3. Հոգեբանական բռնության ցուցանիշները

Ֆիզիկական ցուցանիշներ	Հոգեբանական-վարքային ցուցանիշներ
1. Նյարդային տիկ, էնուրեզ և/կամ դիարեա: 2. Հաճախակի հոգեմարմնական գանգատներ՝ գլխացավ, սրտխառնոց, ցավեր որովայնում: 3. Սննդի, քնելու հետ կապված խանգարումներ: 4. Ունի մտավոր և ֆիզիկական զարգացման հապաղում:	1. Ունի քնի խանգարումներ, անհանգստություն, տագնապ 2. Բնորոշ է երկարատև դեպրեսիվ վիճակը, տրամադրության փոփոխությունները: 3. Կարող է դրսևորել ագրեսիվություն, ահաբեկող վարք: 4. Ունի հակվածություն առանձնանալու, շփման դժվարություններ հասակակիցների հետ: 5. Դրսևորում է ավելորդ զիջողականություն կամ զգուշավորություն:

	6. Նկատվում է դպրոցական առաջադիմության փոփոխություն: 7. Մշտապես ուշանում է կամ բաց թողնում դասերը: 8. Ինքնավնասում, ինքնասպանության փորձ, նկատվում է դեպրեսիա: 9. Դրսևորում է դեմոնստրատիվ(ցուցադրական) վարք/ ուշադրություն գրավելու համար/: 10. Ունի սոցիալական հմտությունների պակաս: 11. Դիտվում է գողություն, դեղերի/թմրանյութերի/ չարաշահում: 12. Ունի անկայուն սոցիալական և սեռական կապեր:

11. Օգտագործված գրականություն

UNICEF Armenia. *Child Violence: Manual.* UNICEF, Aug. 2019, www.unicef.org/armenia/sites/unicef.org.armenia/files/2019-08/Child%20violence%20_%20manual.pdf

Bishkek International School. *Child Protection Policy.* Bishkek International School, Mar. 2020, www.bis.kg/school/wp-content/uploads/2020/05/P8-Child-Protection-Policy-March-2020-RUS.pdf.

International School of Bologna. *Child Protection Policy.* International School of Bologna, www.isbologna.com/child-protection-policy/.

Heritage International School Moldova. *Child Protection Policy.* Heritage International School, www.heritage.md/files/childprotection-ru.pdf.